


ՓԱՏԱԹՂԱՅԻՆ ԱԿՐԵԴԻՏԻՎ



Փաստաթղթային ակրեդիտիվի թողարկման հաջորդական քայլերը.

1. վաճառողը (արտահանողը) և գնորդը (ներմուծողը) կնքում են առևտրային պայմանագիր,
2. գնորդը ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻՆ (Բանկ) տալիս է ակրեդիտիվի թողարկման դիմում,
3. Բանկը թողարկում է ակրեդիտիվը և ուղարկում վաճառողի բանկին,
4. վաճառողի բանկը ստուգում է ակրեդիտիվի իսկությունը և այն ծանուցում վաճառողին,
5. վաճառողը ակրեդիտիվի պայմանների հետ համաձայնության դեպքում առաքում է ապրանքը,
6. վաճառողը ակրեդիտիվով սահմանված փաստաթղթերը (հաշիվ-ապրանքագիր, տրանսպորտային բեռնագիր, ապահովագրական վկայագիր և այլն) ներկայացնում է իր բանկին,
7. վաճառողի բանկը ստուգում է վաճառողի կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը և ուղարկում Բանկին,
8. Բանկը ստուգում է փաստաթղթերի համապատասխանությունը ակրեդիտիվով սահմանված պայմաններին և իրականացնում ակրեդիտիվի գումարի վճարումը վաճառողի բանկին,
9. Բանկը փաստաթղթերը հանձնում է գնորդին՝ ապրանքի ստացման համար,
10. վաճառողի բանկը Բանկի կողմից վճարված գումարը հաշվեգրում է վաճառողի հաշվին: